«Ռուս-Հայկական համալսարան» բարձրագույն կրթության միջպետական կրթական կազմակերպություն

Հաստատում եմ՝

Ռեկտոր՝ Է.Մ. Սանդոյան

№ 9 «__13__» __Դեկտեմբեր__ 2026թ

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ


Մասնագիտություն՝ 101401.00.7 Սպորտ

Կրթական ծրագիր՝ 101401.02.7 Առողջարարական ֆիզիկական կուլտուրա (կինեզիոլոգիա)

Համաձայնեցված է՝

Ամբիոնի վարիչ

Գրիգորյան Արմեն Լևոնի




_____

(ստորագրություն)

Կրթական ծրագրի ղեկավար

Ստեփանյան Լուսինե Սամվելի



_____

(ստորագրություն)

1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

«Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա» կրթական ծրագիրն իրագործվում է «Ռուս-Հայկական համալսարան» բարձրագույն կրթության միջպետական կրթական կազմակերպության կողմից **«101401.00.7 Սպորտ»** մասնագիտության շրջանակներում:

Մագիստրոսի կրթական ծրագիրն իրագործվում է առկա ուսուցման ձևով:

Կրթական ծրագրով ուսումնառության ժամկետը կազմում է 1 (մեկ) տարի:

Մագիստրոսի կրթական ծրագրի ծավալը կազմում է 60 կրեդիտ:

2. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Ծրագրի բովանդակությունը, նպատակի և խնդիրների նկարագրությունը, կրթական ծրագրի արդիականությունը և յուրահատկությունը, շրջանավարտների կարիքը աշխատաշուկայում:

Ծրագրի նպատակը: «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա» մագիստրոսական կրթական ծրագրի նպատակն է պատրաստել կինեզիոլոգիայի բնագավառի բարձր որակավորմամբ մասնագետներ, որոնք միջդիսցիպլինար խորը գիտական գիտելիքների (ֆունկցիոնալ անատոմիա, կենսամեխանիկա, շարժման նյարդաֆիզիոլոգիա, ֆիզիոլոգիա) և ապացուցահեն պրակտիկայի (evidence-based practice) հիման վրա ընդունակ են գնահատելու մարդու շարժողական գործառույթը, մշակելու և իրագործելու անհատականացված վերականգնողական և առողջարարական ծրագրեր՝ բնակչության տարբեր խմբերի ու տարիքային փուլերի համար, աշխատելու մուլտիդիսցիպլինար թիմում և իրականացնելու ինքնուրույն գիտական հետազոտություն՝ համաձայն ոլորտի միջազգային չափանիշների:

Ծրագրի խնդիրները. վերոնշյալ նպատակին հասնելու համար ծրագիրը լուծում է հետևյալ խնդիրները՝

- ապահովել կինեզիոլոգիայի տեսագիտական հիմունքների խորը յուրացումը՝ ֆունկցիոնալ անատոմիա, կենսամեխանիկա, շարժման նյարդաֆիզիոլոգիա և ֆիզիոլոգիա,
- ձևավորել համալիր կինեզիոլոգիական գնահատման հմտություններ՝ անամնեզ, մկանների մանուալ թեստավորում, ֆունկցիոնալ և վիզուալ ախտորոշում, կլինիկական դատողություն,
- ձևավորել բնակչության տարբեր խմբերի (մարզիկներ, երեխաներ և դեռահասներ, ներքին հիվանդություններով պացիենտներ և այլն) համար անհատականացված,

ապացուցահեն ուղղիչ և վերականգնողական ծրագրեր մշակելու և իրագործելու կարողություններ,

- զարգացնել կիրառական կինեզիոլոգիայի, կինեզիոթեյպինգի, ֆունկցիոնալ և սպորտային վնասվածքների ռեաբիլիտացիայի գործնական կոմպետենցիաներ,
- ձևավորել գիտահետազոտական կարողունակություն՝ հետազոտական հարցի և վարկածի ձևակերպում, գրականության քննադատական վերլուծություն, մեթոդների ընտրություն ու կիրառում, արդյունքների գնահատում և ներկայացում,
- ձևավորել մուլտիդիսցիպլինար թիմում աշխատելու և հաճախորդների, նրանց ընտանիքների ու գործընկերների հետ մասնագիտական էթիկայի պահպանմամբ հաղորդակցվելու կարողություն,
- զարգացնել շարունակական ուսումնառության, մասնագիտական ինքնազարգացման և նոր տեխնոլոգիաների ու մեթոդների ինտեգրման ունակություն:

Արդիականությունը և յուրահատկությունը. ծրագիրը միջդիսցիպլինար է՝ ինտեգրելով ֆունկցիոնալ անատոմիայի, կենսամեխանիկայի, նյարդաֆիզիոլոգիայի, ֆիզիկական վերականգնման, կիրառական և սպորտային կինեզիոլոգիայի գիտելիքները: Ծրագրի կառուցվածքը համահունչ է կինեզիոլոգիայի և շարժման գիտությունների առաջատար ամերիկյան և եվրոպական բուհերի (այդ թվում՝ Movement Science և Rehabilitation Sciences ուղղությունների) ծրագրերի հիմնարար սկզբունքներին՝ ապացուցահեն պրակտիկա, միջդիսցիպլինարություն, կլինիկական դատողություն և գիտահետազոտական պատրաստվածություն: Ծրագրի յուրահատկությունը կիրառական կինեզիոլոգիայի, կինեզիոթեյպինգի և ֆունկցիոնալ ռեաբիլիտացիայի գործնական հմտությունների խորացված ուսուցումն է:

Պահանջարկն աշխատաշուկայում. ֆիզիկական վերականգնման և առողջարար ծառայությունների նկատմամբ աճող պահանջարկով պայմանավորված՝ շրջանավարտները պահանջված են վերականգնողական և առողջարարական կենտրոններում, սպորտային ակումբներում, ֆիթնես կենտրոններում, կլինիկաներում և առողջապահական հաստատություններում, ինչպես նաև գիտակրթական ոլորտում:

2.2. Մագիստրոսի կրթական ծրագրի յուրացման մեջ մտնում են ուսումնական և արտադրական պրակտիկաներ՝

- Արտադրական (պրոֆեսիոնալ) պրակտիկա՝ 8 կրեդիտ (288 ակադեմիական ժամ),
- Գիտամանկավարժական պրակտիկա՝ 4 կրեդիտ (144 ակադեմիական ժամ):

2.3. Պետական ավարտական ատեստավորման մասի մեջ մտնում է՝

- Մագիստրոսական ատենախոսության կատարումը և պաշտպանությունը՝ 6 կրեդիտ (216 ակադեմիական ժամ):

3. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Շրջանավարտը կունենա գիտելիքներ՝

1. կինեզիոլոգիայի միջդիսցիպլինար տեսագիտական հիմունքների վերաբերյալ՝ հենաշարժողական համակարգի ֆունկցիոնալ անատոմիա, կենսամեխանիկա, շարժման նյարդաֆիզիոլոգիա և ֆիզիոլոգիա,
2. ֆիզիկական վերականգնման և կինեզիոթերապիայի սկզբունքների վերաբերյալ՝ տարբեր ախտաբանությունների (հենաշարժողական, նյարդային, ներքին, մանկական) և վնասվածքների ժամանակ՝ տարիքային և պոպուլյացիոն առանձնահատկությունների հաշվառմամբ,
3. կիրառական կինեզիոլոգիայի, մկանների մանուալ թեստավորման, վիզուալ ախտորոշման և կինեզիոթեյպինգի մեթոդների վերաբերյալ,
4. ապացուցահեն պրակտիկայի (evidence-based practice) սկզբունքների և կլինիկական դատողության վերաբերյալ,
5. գիտական հետազոտության մեթոդաբանության և կիրառական վիճակագրության հիմունքների վերաբերյալ,
6. հանրային առողջության կառավարման, մասնագիտական էթիկայի և հաղորդակցման հիմունքների վերաբերյալ:

Հմտությունները՝

գիտելիքի կիրառման հմտություններ՝ շրջանավարտը կկարողանա՝

1. կատարել համալիր կինեզիոլոգիական հետազոտություն՝ անամնեզի հավաքում, մկանների մանուալ թեստավորում, ֆունկցիոնալ և վիզուալ (կեցվածքային) գնահատում,
2. մշակել և իրագործել անհատականացված, ապացուցահեն ուղղիչ և վերականգնողական ծրագրեր հաճախորդների տարբեր կատեգորիաների համար՝ տարբեր տարիքային փուլերում,
3. անվտանգության պահպանմամբ կիրառել կիրառական կինեզիոլոգիայի, կինեզիոթեյպինգի և ձեռքային (մերսում, մանուալ) տեխնիկաները,
4. ինքնուրույն վարել հաճախորդներին՝ դաստիարակի ղեկավարությամբ, հսկել և ճշգրտել ծրագրերը՝ ելնելով արդյունքների գնահատումից:

ընդհանրական իմացական հմտություններ՝ շրջանավարտը կկարողանա՝

1. քննադատաբար վերլուծել և ընդհանրացնել մասնագիտական ու գիտական տեղեկատվությունը և գնահատել ապացույցների հավաստիությունը,
2. պլանավորել և իրականացնել ինքնուրույն գիտական հետազոտություն՝ վարկածի ձևակերպում, մեթոդների ընտրություն, տվյալների վերլուծություն և մեկնաբանում,
3. կիրառել կլինիկական դատողություն և խնդիրների լուծման մոտեցումներ բարդ, ոչ ստանդարտ դեպքերում:

Կարողունակությունը (կոմպետենցիան)՝

ինքնուրույնությունը և պատասխանատվությունը՝ շրջանավարտը՝

1. ինքնուրույն կկայացնի մասնագիտական որոշումներ և պատասխանատվություն կկրի դրանց հետևանքների ու արդյունավետության համար,
2. կաշխատի ինքնուրույն և առաջատար դեր կստանձնի մուլտիդիսցիպլինար թիմում՝ հարգելով ինքնուրույնությունն ու գործընկերությունը,
3. կպահպանի մասնագիտական էթիկան և անվտանգության սկզբունքները՝ ցուցաբերելով հաճախորդակենտրոն և կարեկցող մոտեցում,
4. կիրականացնի շարունակական մասնագիտական ինքնազարգացում՝ ինտեգրելով ոլորտի նորագույն գիտական նվաճումները:

Կրթական ծրագրի շրջանավարտների ակնկալվող մասնագիտական գործունեության տեսակները

- ֆիզիկական վերականգնողական և կինեզիոթերապևտիկ գործունեություն,
- առողջության բարելավմանն ու հիվանդությունների կանխարգելմանն ուղղված գործունեություն,
- սպորտային կինեզիոլոգիա և վնասվածքների ռեաբիլիտացիա,
- գիտահետազոտական և մանկավարժական գործունեություն:

Կրթական ծրագրի պահանջարկը

Ծրագրի շրջանավարտները պահանջված են վերականգնողական և առողջարարական կենտրոններում, սպորտային կազմակերպություններում, կլինիկաներում, ֆիթնես կենտրոններում, ինչպես նաև գիտակրթական հաստատություններում՝ որպես կինեզիոլոգ, ֆիզիկական վերականգնման մասնագետ և հետազոտող:

«Ռուս-Հայկական համալսարան» բարձրագույն կրթության միջպետական կրթական կազմակերպություն



Հաստատում եմ՝
Ռեկտոր՝ Է.Մ. Սանդոյան
«15» Դեկտեմբեր 2026թ

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մասնագիտություն՝ 011401.00.6 Մասնագիտական մանկավարժություն

Կրթական ծրագիր՝ 011401.09.6 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ

Համաձայնեցված է՝

Ամբիոնի վարիչ

պրոֆեսոր Ա. Լ. Գրիգորյան

_____

(ստորագրություն)

Կրթական ծրագրի ղեկավար,

պրոֆեսոր Ա. Լ. Գրիգորյան

_____

(ստորագրություն)

1.ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

«**Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ**» բակալավրի կրթական ծրագիրը իրականացվում է «Ռուս-Հայկական համալսարան» բարձրագույն կրթության միջպետական կրթական կազմակերպության կողմից՝ **011401.00.6 «Մասնագիտական մանկավարժություն»** մասնագիտության շրջանակներում:

Կրթական ծրագիրը մշակված է Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության պետական կրթական չափորոշիչների, Որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ), աշխատաշուկայի պահանջների և ոլորտի զարգացման արդի միտումների հիման վրա:

Ծրագրի նպատակն է պատրաստել մրցունակ մասնագետներ, որոնք կունենան ֆիզիկական դաստիարակության, սպորտային մարզման, մանկավարժության, առողջ ապրելակերպի, մարզական կառավարման և գիտահետազոտական գործունեության իրականացման համար անհրաժեշտ տեսական գիտելիքներ, գործնական հմտություններ և մասնագիտական կարողունակություններ:

Բակալավրի կրթական ծրագիրն իրականացվում է **առկա ուսուցման ձևով**:

Ուսումնառության տևողությունը կազմում է **4 տարի**:

Կրթական ծրագրի ընդհանուր ծավալը կազմում է **240 կրեդիտ**:

2. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Ծրագրի բովանդակությունը, նպատակի և խնդիրների մանրամասն նկարագրությունը, կրթական ծրագրի ակտուալությունը և յուրահատկությունը

Կրթական ծրագիրը միավորում է մանկավարժության, ֆիզիկական դաստիարակության, սպորտային մարզման, առողջ ապրելակերպի, կենսաբժշկական գիտությունների, հոգեբանության, կառավարման և գիտահետազոտական աշխատանքի ժամանակակից մոտեցումները:

Ծրագրի նպատակն է ձևավորել բարձր որակավորում ունեցող ֆիզիկական դաստիարակության ուսուցիչներ և մարզիչներ, որոնք ունակ կլինեն արդյունավետ կազմակերպել կրթական, մարզական, առողջարար և գիտամեթոդական գործունեություն:

Ծրագրի հիմնական խնդիրներն են՝

- ձևավորել ֆիզիկական դաստիարակության և սպորտային մարզման հիմնարար գիտելիքներ,

- զարգացնել դասավանդման և մարզչական գործունեության գործնական հմտություններ,
- ապահովել ուսումնական և մարզական գործընթացների գիտական պլանավորման կարողություններ,
- զարգացնել առողջապահական, ներառական և անվտանգ կրթական միջավայր ստեղծելու կարողությունները,
- ձևավորել մասնագիտական հաղորդակցման, առաջնորդության և թիմային աշխատանքի մշակույթ,
- զարգացնել գիտահետազոտական գործունեության հմտություններ,
- ապահովել շրջանավարտների մրցունակությունը աշխատաշուկայում:

Կրթական ծրագրի ակտուալությունը

Ֆիզիկական ակտիվության, առողջ ապրելակերպի և սպորտի դերի շարունակական աճը հասարակության մեջ պայմանավորում է բարձր որակավորում ունեցող մասնագետների պահանջարկը: Ծրագիրը լիովին համապատասխանում է ոլորտի ժամանակակից միջազգային չափանիշներին և նպաստում է կրթության, սպորտի և առողջապահության ոլորտների զարգացմանը:

Կրթական ծրագրի յուրահատկությունը

Ծրագիրն առանձնանում է տեսական և գործնական ուսուցման արդյունավետ համադրությամբ, մարզչամանկավարժական պատրաստության բարձր մակարդակով, ժամանակակից կրթական տեխնոլոգիաների կիրառմամբ, գիտահետազոտական բաղադրիչի զարգացմամբ և միջազգային փորձի ինտեգրմամբ:

Շրջանավարտների պահանջարկը աշխատաշուկայում

Ծրագրի շրջանավարտները պահանջված են՝

- հանրակրթական դպրոցներում,
- քոլեջներում,
- բուհերում,
- մանկապատանեկան մարզադպրոցներում,
- օլիմպիական հերթափոխի մարզադպրոցներում,
- մարզական ֆեդերացիաներում,
- ֆիթնես և առողջարար կենտրոններում,
- պետական և համայնքային կառույցներում,

- մասնավոր կրթական և մարզական կազմակերպություններում,
- գիտահետազոտական հաստատություններում:

2.2 Բակալավրի կրթական ծրագրի յուրացման մեջ մտնում են հետևյալ պրակտիկաները

Ուսումնական պրակտիկաներ՝

- Ծանոթացման պրակտիկա,
- Մարզչամանկավարժական ուսումնական պրակտիկա,
- Մասնագիտական-ուսումնական պրակտիկա:

Արտադրական (մասնագիտական) պրակտիկաներ՝

- Մանկավարժական պրակտիկա,
- Մարզչական պրակտիկա,
- Նախադիպլոմային (արտադրական) պրակտիկա:

2.3 Պետական ավարտական ատեստացիա

Պետական ավարտական ատեստացիան ներառում է՝

- բակալավրի ավարտական աշխատանքի կատարում,
- ավարտական աշխատանքի հրապարակային պաշտպանություն:

3. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Գիտելիքները

Շրջանավարտը կիմանա՝

1. Ֆիզիկական դաստիարակության և սպորտային մարզման տեսության ու մեթոդիկայի հիմնարար սկզբունքները:
2. Մանկավարժության, հոգեբանության, անատոմիայի, ֆիզիոլոգիայի, կենսամեխանիկայի և սպորտային բժշկության հիմունքները:
3. Սպորտային մարզման պլանավորման, կառավարման և վերահսկման ժամանակակից մոտեցումները:
4. Ֆիզիկական պատրաստվածության գնահատման մեթոդները:
5. Առողջ ապրելակերպի և սպորտային հիգիենայի սկզբունքները:

6. Գիտահետազոտական աշխատանքի կազմակերպման և տվյալների մշակման մեթոդները:

7. Կրթության և սպորտի ոլորտի իրավական ու էթիկական հիմքերը:

Հմտությունները

Գիտելիքի կիրառման հմտությունները

1. Պլանավորել և իրականացնել ֆիզիկական դաստիարակության դասեր և մարզումներ:
2. Ընտրել և կիրառել դասավանդման և մարզման արդյունավետ մեթոդներ:
3. Գնահատել սովորողների և մարզիկների ֆիզիկական պատրաստվածությունը:
4. Կազմել մարզման ծրագրեր և տարեկան պլաններ:
5. Կազմակերպել անվտանգ և առողջարար ուսումնական միջավայր:
6. Իրականացնել գիտամեթոդական աշխատանք:

Ընդհանրական իմացական հմտությունները

1. Վերլուծել և լուծել մասնագիտական խնդիրներ:
2. Կայացնել հիմնավորված որոշումներ:
3. Օգտագործել թվային և տեղեկատվական տեխնոլոգիաներ:
4. Աշխատել թիմում:
5. Արդյունավետ հաղորդակցվել մասնագիտական միջավայրում:
6. Կազմակերպել ինքնուրույն ուսումնառություն:

Կարողունակությունները (կոմպետենցիաները)

Ինքնուրույնությունը և պատասխանատվությունը

1. Ինքնուրույն կազմակերպել կրթական և մարզական գործընթացը:
2. Կրել մասնագիտական պատասխանատվություն սովորողների և մարզիկների առողջության ու անվտանգության համար:
3. Պահպանել մասնագիտական էթիկայի նորմերը:
4. Կազմակերպել թիմային աշխատանք:
5. Շարունակաբար կատարելագործել մասնագիտական գիտելիքներն ու կարողությունները:

6. Կիրառել նորարարական տեխնոլոգիաներ մասնագիտական գործունեության մեջ:

4. Կրթական ծրագրի շրջանավարտների ակնկալվող մասնագիտական գործունեության տեսակները

Ծրագրի շրջանավարտները կարող են իրականացնել հետևյալ մասնագիտական գործունեությունը.

- ֆիզիկական դաստիարակության ուսուցչի գործունեություն,
- մարզչամանկավարժական գործունեություն,
- սպորտային թիմերի և մարզական խմբերի ղեկավարում,
- առողջարար և վերականգնողական ֆիզիկական կուլտուրայի կազմակերպում,
- ֆիթնեսի և առողջ ապրելակերպի ծրագրերի մշակում և իրականացում,
- սպորտային միջոցառումների կազմակերպում,
- կրթական և մարզական ծրագրերի նախագծում,
- գիտահետազոտական և գիտամեթոդական գործունեություն,
- կրթության և սպորտի ոլորտում կառավարման գործունեություն:

5. Կրթական ծրագրի պահանջարկը

«Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» բակալավրի կրթական ծրագիրը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կրթության, սպորտի և առողջապահության ոլորտների զարգացման առաջնահերթություններին և աշխատաշուկայի պահանջներին: Ֆիզիկական ակտիվության, առողջ ապրելակերպի խթանման, ներառական կրթության և սպորտի զարգացման պետական քաղաքականությունը նպաստում է ոլորտի մասնագետների պահանջարկի շարունակական աճին:

Ծրագրի շրջանավարտները մրցունակ են պետական, համայնքային և մասնավոր հատվածներում, ինչպես նաև միջազգային կրթական, մարզական և առողջարար կազմակերպություններում: Նրանք կարող են շարունակել կրթությունը մագիստրատուրայում, զբաղվել գիտահետազոտական գործունեությամբ և ներգրավվել միջազգային ծրագրերում՝ ապահովելով շարունակական

«Ռուս-Հայկական համալսարան» բարձրագույն կրթության միջպետական կրթական կազմակերպություն



Հաստատում եմ՝

Ռեկտոր՝ Է.Մ. Սանդոյան

№ 9 «15» մայիսի 2026թ

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ


Մասնագիտություն՝ 011401.00.7 Մասնագիտական մանկավարժություն

Կրթական ծրագիր՝ 011401.09.7 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ

Համաձայնեցված է՝

Ամբիոնի վարիչ

պրոֆեսոր Ա. Լ. Գրիգորյան




_____

(ստորագրություն)

Կրթական ծրագրի ղեկավար,

պրոֆեսոր Ա. Լ. Գրիգորյան



_____

(ստորագրություն)

1.ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

«**Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ**» մագիստրոսական կրթական ծրագիրն իրականացվում է «Ռուս-Հայկական համալսարան» բարձրագույն կրթության միջպետական կրթական կազմակերպության կողմից՝ **011401.00.7 «Մասնագիտական մանկավարժություն»** մասնագիտության շրջանակներում:

Կրթական ծրագիրը մշակվել է Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության պետական կրթական չափորոշիչների, Որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) և ոլորտի զարգացման ժամանակակից պահանջների հիման վրա:

Ծրագիրը նպատակ ունի պատրաստել բարձր որակավորում ունեցող մասնագետներ, որոնք կունենան խորացված մասնագիտական գիտելիքներ, գիտահետազոտական, մանկավարժական, մարզչական և կազմակերպչական կարողություններ, կկարողանան մշակել և իրականացնել նորարարական կրթական ու մարզական ծրագրեր, իրականացնել գիտական հետազոտություններ և ղեկավարել կրթական ու մարզական գործընթացներ:

Կրթական ծրագիրն իրականացվում է առկա ուսուցման ձևով:

Ուսումնառության տևողությունը՝ 1 տարի:

Ծրագրի ընդհանուր ծավալը՝ 60 կրեդիտ:

2. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Ծրագրի բովանդակությունը, նպատակի և խնդիրների մանրամասն նկարագրությունը, կրթական ծրագրի ակտուալությունը և յուրահատկությունը

«Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» մագիստրոսական կրթական ծրագիրը նախատեսված է ֆիզիկական դաստիարակության և սպորտի ոլորտում բարձր մասնագիտական, գիտահետազոտական և մանկավարժական կարողություններ ունեցող մասնագետների պատրաստման համար:

Ծրագիրը միավորում է մանկավարժության, մարզչական գործունեության, սպորտային գիտությունների, առողջ ապրելակերպի, կառավարման, հետազոտության մեթոդաբանության և նորարարական կրթական տեխնոլոգիաների ժամանակակից մոտեցումները:

Ծրագրի նպատակներն են՝

- խորացնել ֆիզիկական դաստիարակության և սպորտային մարզման ոլորտի մասնագիտական գիտելիքները,

- ձևավորել գիտահետազոտական գործունեության իրականացման կարողություններ,
- զարգացնել կրթական և մարզական գործընթացների նախագծման, կառավարման և գնահատման հմտություններ,
- պատրաստել մասնագետներ, որոնք կարող են մշակել և ներդնել նորարարական կրթական ու մարզական ծրագրեր,
- ձևավորել առաջնորդության, մասնագիտական հաղորդակցության և ռազմավարական կառավարման կարողություններ,
- ապահովել շրջանավարտների մրցունակությունը ազգային և միջազգային աշխատաշուկաներում:

Կրթական ծրագրի ակտուալությունը

Ֆիզիկական դաստիարակության, սպորտի, առողջապահության և կրթության ոլորտների արագ զարգացումը պահանջում է նոր սերնդի մասնագետներ, որոնք տիրապետում են գիտական հետազոտության, կրթական նորարարությունների, մարզական տեխնոլոգիաների և կառավարման ժամանակակից մեթոդներին:

Ծրագիրը նպաստում է առողջ ապրելակերպի տարածմանը, բարձրորակ մարզական կրթության զարգացմանը, սպորտային համակարգի կատարելագործմանը և գիտության ու պրակտիկայի ինտեգրմանը:

Կրթական ծրագրի յուրահատկությունը

Ծրագրի առանձնահատկություններն են՝

- գիտահետազոտական բաղադրիչի ուժեղացված ընդգրկում,
- ժամանակակից մարզական և մանկավարժական տեխնոլոգիաների կիրառում,
- գիտափորձերի կազմակերպում,
- վիճակագրական տվյալների մշակում,
- միջազգային փորձի ուսումնասիրություն,
- կրթական և մարզական գործընթացների կառավարման խորացված ուսումնասիրություն,
- ավարտական հետազոտական աշխատանքի իրականացում:

Շրջանավարտների պահանջարկը աշխատաշուկայում

Ծրագրի շրջանավարտները պահանջված են՝

- բուհերում,
- գիտահետազոտական կենտրոններում,
- մարզական ֆեդերացիաներում,
- օլիմպիական կոմիտեներում,
- մարզական դպրոցներում,
- պետական կառավարման մարմիններում,
- կրթության և սպորտի ոլորտի կառավարման համակարգում,
- առողջարարական և վերականգնողական կենտրոններում,
- ֆիթնեսի և առողջ ապրելակերպի կազմակերպություններում,
- միջազգային կրթական և սպորտային ծրագրերում:

2.2 Մագիստրոսական կրթական ծրագրի յուրացման մեջ մտնում են հետևյալ պրակտիկաները

Ուսումնական պրակտիկաներ

- Գիտահետազոտական պրակտիկա,
- Մանկավարժական պրակտիկա,
- Մասնագիտական-հետազոտական պրակտիկա:

Արտադրական (մասնագիտական) պրակտիկաներ

- Մարզչամանկավարժական պրակտիկա,
- Կազմակերպչական-կառավարչական պրակտիկա,
- Նախադիպլոմային (արտադրական) պրակտիկա:

2.3 Պետական ավարտական ատեստացիա

Պետական ավարտական ատեստացիան ներառում է՝

- մագիստրոսական թեզի պատրաստում,
- մագիստրոսական թեզի հրապարակային պաշտպանություն:

3. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Գիտելիքները

Շրջանավարտը կիմանա՝

1. Ֆիզիկական դաստիարակության և սպորտային մարզման ժամանակակից տեսություններն ու հայեցակարգերը:

2. Գիտական հետազոտությունների կազմակերպման և իրականացման մեթոդաբանությունը:

3. Կրթական և մարզական գործընթացների ռազմավարական պլանավորման և կառավարման սկզբունքները:

4. Մարզական պատրաստության ժամանակակից տեխնոլոգիաները:

5. Կենսամեխանիկայի, սպորտային ֆիզիոլոգիայի և սպորտային բժշկության արդի մոտեցումները:

6. Տվյալների վիճակագրական մշակման և գիտական վերլուծության մեթոդները:

7. Կրթության, սպորտի և գիտության ոլորտների իրավական և էթիկական հիմքերը:

Հմտությունները

Գիտելիքի կիրառման հմտությունները

1. Նախագծել, կազմակերպել և գնահատել կրթական և մարզական գործընթացները:

2. Իրականացնել գիտահետազոտական աշխատանք:

3. Մշակել նորարարական ուսումնական ծրագրեր:

4. Կիրառել ժամանակակից մարզչական տեխնոլոգիաներ:

5. Կատարել հետազոտական տվյալների մշակում և գիտական մեկնաբանություն:

6. Ղեկավարել մասնագիտական նախագծեր և թիմեր:

Ընդհանրական իմացական հմտությունները

1. Քննադատաբար վերլուծել գիտական տեղեկատվությունը:

2. Կայացնել ռազմավարական որոշումներ:

3. Մշակել և իրականացնել նորարարական նախագծեր:

4. Արդյունավետ ղեկավարել թիմային աշխատանքը:

5. Կիրառել տեղեկատվական և թվային տեխնոլոգիաներ:

6. Ներկայացնել հետազոտության արդյունքները գիտական հանրությանը:

Կարողունակությունները (կոմպետենցիաները)

Ինքնուրույնությունը և պատասխանատվությունը

1. Ինքնուրույն կազմակերպել և ղեկավարել կրթական, մարզական և գիտահետազոտական գործունեությունը:
2. Կրել պատասխանատվություն մասնագիտական որոշումների և դրանց արդյունքների համար:
3. Ղեկավարել կրթական և մարզական ծրագրեր:
4. Պահպանել գիտական էթիկայի և ակադեմիական ազնվության սկզբունքները:
5. Իրականացնել շարունակական մասնագիտական զարգացում:
6. Ներդնել նորարարություններ կրթության և սպորտի ոլորտում:

4. Կրթական ծրագրի շրջանավարտների ակնկալվող մասնագիտական գործունեության տեսակները

Ծրագրի շրջանավարտները կարող են իրականացնել՝

- բուհական մանկավարժական գործունեություն,
- գիտահետազոտական գործունեություն,
- մարզչամանկավարժական գործունեություն բարձրակարգ մարզիկների պատրաստման համակարգում,
- կրթական և մարզական ծրագրերի նախագծում և կառավարում,
- սպորտային կազմակերպությունների ղեկավարում,
- ուսումնամեթոդական նյութերի և կրթական չափորոշիչների մշակում,
- սպորտային գործընթացների մոնիթորինգ և գնահատում,
- առողջարարական և վերականգնողական ծրագրերի մշակում,
- խորհրդատվական և փորձագիտական գործունեություն,
- միջազգային կրթական և գիտական նախագծերի իրականացում:

5. Կրթական ծրագրի պահանջարկը

«**Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ**» մագիստրոսական կրթական ծրագիրը համապատասխանում է Հայաստանի

Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի ոլորտների ռազմավարական զարգացման առաջնահերթություններին և միջազգային կրթական չափանիշներին:

Ծրագրի շրջանավարտների պահանջարկը պայմանավորված է բարձրագույն կրթական հաստատություններում, գիտահետազոտական կենտրոններում, մարզական կազմակերպություններում, պետական կառավարման համակարգում և մասնավոր հատվածում բարձր որակավորում ունեցող մասնագետների աճող անհրաժեշտությամբ: Ժամանակակից կրթական և մարզական համակարգերը պահանջում են մասնագետներ, որոնք տիրապետում են գիտական հետազոտության, կրթական ծրագրերի մշակման, մարզական գործընթացների կառավարման և նորարարական տեխնոլոգիաների կիրառման կարողություններին:

Ծրագիրն ապահովում է շրջանավարտների մրցունակությունը ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ միջազգային աշխատաշուկայում, ինչպես նաև ստեղծում է նախադրյալներ հետագա ուսումնառության և գիտական գործունեության (ասպիրանտուրա/դոկտորանտուրա) շարունակման համար: